

«Դիմադրություն» Շարժման Խաղաղ Անհնազանդության Ցույցերը Կը Ծարունակուին. Երթ Դէպի Բաղրամեան 26



Կարդալ էջ 3

Արիս Պապիկեան Վերընտրուեցաւ Օնթարիօ Նահանգի Խորհրդարանի Երեսփոխան

Օնթարիոյի նահանգային խորհրդարանի անդամ, Յառաջդիմական-պահպանողականներու կուսակցութեան թեկնածու Արիս Պապիկեան 2 յունիսին տեղի ունեցած Նահանգային երեսփոխանական ընտրութիւններուն վերընտրուեցաւ Սքարպորօ-Աճընթքորթի շրջանէն:

68-ամեայ Պապիկեան Թորոնթոյի Հայ կեդրոնին մէջ տեղի ունեցած յաղթական երեկոյթի ժամանակ ըսաւ, որ հաւատարիմ է իր կուսակցութեան խոստումներուն՝ վերակառուցելու Սքարպորօ Հէլթ Նեթուըրքի «Պիրչմաունթ» հիւանդանոցը եւ ընդլայնելու Շեփըրտ Սալուէյը:

Կարդալ՝ էջ 3:



ՀՕՄ-ի Գանատայի Ծրջանը Կը զօրակցի Արցախին եւ հայ զինուորին



Կարդալ էջ 3



YES

All-New
CIVIC
SEDAN

BOOK YOUR
TEST DRIVE TODAY!

TRO BACHEKJIAN
MIKE TOROSSIAN
KEVORK ASADOURIAN

7000, boul. Henri-Bourassa Est,
Montréal-Nord, QC H1G 6C4
☎ : 514 327-7777



Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN



Սեփականատեր
Յարութ Միփան

Ընտանեկան բացառիկ գործառնություն
ուր կը գտնէք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ

 **IN HOUSE**

COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել
Հնտեղէն աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիիի հաց եւ իրաքեան սոմուն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



«Դիմադրութիւն» Ծարժման Խաղաղ Անհնազանդութեան Ցոյցերը Կը Ծարունակուին. Երթ Դէպի Բաղրամեան 26

Յրանսայի հրապարակէն երէկ 10 յունիսին սկիզբ առաւ Նիկոլ Փաշինեանի հրաժարականի պահանջով «Դիմադրութեան» շարժման երթը։

Այս անգամ երթի կանգառը Բաղրամեան 26–ն էր, ուր տեղի կ’ունենար ՀԱՊԿ–ի արտաքին գործոց նախարարներու խորհուրդի հերթական նիստը։

Նախքան երթը, ՀՅԴ–ի անդամ, «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Գեղամ Մանուկեան յայտարարեց, որ իրենք իրենց ձայնը կը բարձրացնեն ըսելու մէկ բան՝ «Նիկոլն ու իր իշխանութիւնը չունին որեւէ լիազօրութիւն, օրինականութիւն հանդէս գալու Հայաստանի անունով, խօսելու արցախահայութեան անունով, ստորագրելու որեւէ փաստաթուղթ»։

«Ամէն անգամ մեր ներկայութեամբ այդ ուղերձը յղած ենք աշխարհին, յղած ենք տարբեր միջազգային կազմակերպութիւններու», ըսաւ ան։

«Միութիւն, պայքար, յաղթանակ», «Նիկոլ, դաւաճան», «Առանց Նիկոլ Հայաստան» վանկարկումներով երթը հասաւ Բաղրամեան պողոտայ, սակայն չկրցաւ հասնիլ Բաղրամեան 26, քանի որ մեծաթիւ ոստիկաններ քանի մը շարքով փակած էին Բաղրամեան 26 տանող ճամբան։

Բաղրամեան պողոտային վրայ ընդդիմադիր պատգամաւորները հանդէս եկան ելոյթներով, որոնցմէ ետք երթը վերադարձաւ Յրանսայի հրապարակ։

9 նոյեմբերի այդ պարտուողական յայտարարութեան մէջ 3 տարուան ժամկէտով կը նախանշուէր Հայաստանի եւ Արցախի միջեւ կապ ապահովող այլ ջրջանցող ճամբու կառուցում. Յրանսայի հրապարակին վրայ «Երկիր»–ին հետ զրոյցի մը ընթացքին ըսաւ Գեղամ Մանուկեան՝ անդրադառնալով ջրջանառուող այն լուրերուն, որ յառաջիկային իշխանութիւնները կը պատրաստուին տալ ո՛չ միայն Բերձորի ճամբան, այլ նաեւ Բերձոր քաղաքն ու յարակից գիւղերը։

Արիս Պապիկեան Վերընտրուեցաւ Օնթարիօ Նահանգի Խորհրդարանի Երեսփոխան

Օնթարիոյի նահանգային խորհրդարանի անդամ, Յառաջդիմական–պահպանողականներու կուսակցութեան թեկնածու Արիս Պապիկեան 2 յունիսին տեղի ունեցած Նահանգային երեսփոխանական ընտրութիւններուն վերնըտրուեցաւ Սքարպորօ–Աճընթքօրթի շրջանէն։

68–ամեայ Պապիկեան Թորոնթոյի Հայ կեդրոնին մէջ տեղի ունեցած յաղթական երեկոյթի ժամանակ ըսաւ, որ հաւատարիմ է իր կուսակցութեան խոստումներուն՝ վերականգնելու Սքարպորօ Հելթ Նեթուըրքի «Պիրչմաունթ» հիւանդանոցը եւ ընդլայնելու Շեփրտ Սապուէյը։

Ընտրութիւններու վերջնական արդիւնքներով Պապիկեան յաղթեց՝ ստանալով ընտրողներու ձայներուն 49,1–ը։

Երեսփոխան Պապիկեանին պաշտօնապէս շնորհաւորեցին Քանատայի եւ Թորոնթոյի Հայ դատի յանձնախումբերը, Թորոնթոյի Հայ կեդրոնը, Թորոնթոյի Ս. Աստուածածին եւ Ս. Երրորդութիւն Հայ առաքելական եկեղեցիները։

Արիս Պապիկեան Օնթարիոյի Միսիսոկա շրջանի քաղաքացիութեան դատաւորի պաշտօնին կոչուած է 2009–ին եւ այդ պաշտօնը վարած է 6 տարի։

Ան երկար տարիներ վարած է Armenian National Federation of Canada–ի նախագահի պաշտօնը, ինչպէս նաեւ վարած է Canadian Ethnocultural Council–ի քարտուղարութիւնը։ Իրբեւ լրացրող անդամակցած է National Ethnic Media and Press Council of Canada–ի։ Գանատայի դաշնակցային դրութեան հիմնադրման 125–ամեակին առիթով ան արժանացած է Մեծն Բրիտանիոյ Թագուհիին գնահատական շքանշանին։

Պապիկեան մեծ ներդրում ունեցած է հայ համայնքի կեանքին մէջ։ Գանատահայ համայնքին իր 32 տարուան անխոնջ ծառայութեան ընթացքին ան 4 տարի գործած է իրբեւ պատասխանատու վարիչ տնօրէն Գանատայի Հայ դատի յանձնախումբի Օթթաուայի գրասենեակին մէջ։ Պարգեւատրուած է Հայաստանի Հանրապետութեան սփիւռքի նախարարութեան մետալով։

Լուս Անճելլսի Մէջ Սինանեանի Դէմ Բողոքի Ցոյց

Երեքշաբթի, 7 յունիսին, սփիւռքի գործերու գլխաւոր յանձնակատար Զարեհ Սինանեան փորձեց համախօհներ հաւաքել Քալիֆօրնիոյ Հիւսիսային Հոլիվուտի ճաշարաններէն մէկուն մէջ՝ հանդիպման համար։ Ծաշարանին մէջ հաւաքուածները եկած էին բողոքելու թէ՛ Լուս Անճելլսի մէջ Սինանեանի ներկայութեան, թէ՛ ալ Փաշինեանի վարած ապագգային քաղաքականութեան մէջ անոր ստանձնած շարունակական դերակատարութեան համար։

Ծաշարանին մէջ ներկաները Սինանեանին դիմաւորեցին «Սինանեան դաւաճան» եւ «Նիկոլ դաւաճան» վանկարկումներով։

Անցեալ ամիս Սինանեանը վրդովեցուց սփիւռքը՝ յայտարարելով, որ անոնք, որոնք դէմ են Արցախի հարցով Փաշինեանի դաւաճանական քաղաքականութեան, «դաւաճաններ» են։ Ցուցարարները Սինանեանին յիշեցուցին, որ սփիւռքը պիտի շարունակէ զգօն մնալ Հայաստանի ապագային նկատմամբ, եւ որ ինքը եւ իր վարչապետը սփիւռքը լռեցնելու հարցին մէջ ձախողած են, ինչպէս Հայաստանի մէջ։

Նախատեսուած հաւաքին կազմակերպիչները՝ հասկնալով, որ ներկաները հաւաքուած են Սինանեանին դէմ բողոքելու համար, ակնյայտօրէն թշնամացած են եւ սկսած հայհոյանքներ ու սպառնալիքներ հնչեցնել ցուցարարներուն հասցէին։ Սինանեանը, որ նոյնպէս նկատելիօրէն ջղայնացած էր, սկսաւ պոռալ բողոքողներուն վրայ, եւ կազմակերպիչները շուտով դուրս հանեցին զինք։ Այնուհետեւ մօտ հարիւր ցուցարարներ շարունակած են իրենց բողոքի ցոյցը Սինանեանի հաւաքավայրէն դուրս։

Ցուցարարները իրենց բողոքը աւարտեցին երգելով հայկական հայրենասիրական «Զարթի՛ր լաօ» եւ «Գինի լից» երգերը եւ բողոքի ցոյցը աւարտեցին Հայաստանի քայլերգով։

Ընկհ. Վանուհի Իսաջանեան \$50,000 Կը Կտակէ ՀՕՄ–ի Գանատայի Ծրջանային Վարչութեան

Այսու կու գանք տեղեկացնել մեր անդամներուն եւ ՀՕՄ–ի բարեկամներուն թէ՛ ՀՕՄ–ի Գանատայի Երջանային Վարչութեան առաջին ատենապետ ընկհ. Վանուհի Իսաջանեան \$50,000 կտակած է ՀՕՄ–ի Գանատայի Երջանային Վարչութեան։

Ընկհ. Իսաջանեան, իր ողջութեան փափաք յայտնած էր, իր կտակած գումարով հիմնադրամ մը ստեղծել Երջանային Վարչութեան մօտ, որմէ շահարկուած տարեկան եկամուտը տրամադրուի ՀՕՄ–ի՝ Ախուրեանի «Մօր ու Մանկան Առողջապահական կեդրոն»ին։

Ընդառաջելով լուսահոգի ընկերուհիին փափաքին, Երջանային Վարչութիւնս յետ մահու հիմնեց «Վանուհի Իսաջանեան» անձեռնմխելի ֆոնտը։

Հայ Օգնութեան Միութեան Գանատայի Երջանային Վարչութիւնը մեծապէս կը գնահատէ ընկհ. Վանուհիի ազգանուէր այս արարքը, որմէ պիտի օգտուին Ախուրեանի «Մօր ու Մանկան Առողջապահական կեդրոն»ի ծննդատան մէջ ծնունդ տուող մայրերն ու նորածին երեխաները։

ՀՕՄ–ի Գանատայի Ծրջանը Կը զօրակցի Արցախին եւ հայ զինուորին

Միեկի ՀՕՄ–ականներ եւ Հայրենակիցներ,

Այս ճակատագրական օրերուն, բոլորիս կիզակէտն է Արցախն ու Հայաստանը։ ՀՕՄ–ի Գանատայի Երջանային Վարչութիւնը, Արցախի համար հանգանակուած գումարէն, նիւթական անմիջական ներդրում բերաւ երկու կարեւոր ծրագիրներու , որոնք պիտի օժանդակեն Արցախի սահմանամերձ գիւղերու մէջ ապրող հայութեան եւ պատերազմի արիւնոտ բովէն անցած մեր խիզախ զինուորներու վերականգնումին, ի մասնաւորի՝ Երեւանի Հաշմանդամ Զինուորի Վերականգնողական Կեդրոնի եւ Արցախահայութեան անմիջական կարիքներուն։

1) ՀՕՄի նորագոյն ծրագիրը՝ «Արեւային ջրատաքացման համակարգի» (Solar Panels program) որդեգրումը արցախի հանրապետութենէն ներս

Կեդրոնական Վարչութեան այս նոր ծրագրէն պիտի օգտուին Արցախի սահմանամերձ գիւղերու ընտանիքները, որոնք անցնող ձմռան ամիսներուն, կազի խողովակներու պայթումի հետեւանքով զրկուեցան իրենց տուները ջերմացնող միջոցների։ Ծրագիրը պիտի արժէ \$224,000 ամերիկեան տոլար։։

Երջանային Վարչութիւնս նկատի առնելով հրատապ վիճակը, \$100,000 ամերիկեան տոլար տրամադրեց այս ծրագրին, իսկ Արցախի կառավարութիւնը որոշեց նոյն համեմատութեամբ մասնակցիլ ծրագրին։ Ծրագիրը արդէն իսկ ընթացքի մէջ է։

Մեր նուիրատուութեան գումարէն մաս մը պիտի տրամադրուի չրջանիս հովանաւորած՝ Ստեփանակերտի Սօսէ մանկապարտէզի ջերուցման։

2) «Զինուորի Տուն» Վերականգնողական Կեդրոնի Մնունդի Ծրագիր Հայ Օգնութեան Միութիւնը 2017 թուականէն սկսեալ կը գործակցի Երեւանի թիւ 1 Հերացի Հիւանդանոցի մէջ գործող «Զինուորի Տուն» Վերականգնողական Կեդրոնին։

Իր միաւորներու եւ նուիրատուներու հովանաւորութեամբ, Հայ Օգնութեան Միութիւնը տարիներու ընթացքին մասնակցած է կեդրոնի վերանորոգման, կահոյքի, դեղորայքի եւ յատուկ սարքերու ապահովման աշխատանքներուն, իրականցնելով զանազան ծրագիրներ։

Հոն անվճար բուժում ու խնամք կը ստանան յանուն հայրենիքի իրենց առողջութիւնը զոհած եւ հաշմանդամուած զինուորները։ Թէեւ Հայաստանի կառավարութիւնը կը հոգայ անոնց բուժման ծախսերը, սակայն սնունդի, սարգերու եւ այլ ծախսերը կ’ապահովեն անհատներ եւ բարեսիրական կազմակերպութիւններ որոնց կարգին է նաեւ ՀՕՄ–ը։

«Զինուորի Տուն» Վերականգնողական Կեդրոնէն ներս բուժում ստացող զինուորներուն սննդեղէնի տարեկան ծախսերը կ’ենթադրեն \$120,000 ամերիկեան տոլար։ Նկատի առնելով այս ծրագրի կարեւորութիւնը, Երջանային Վարչութիւնս այս ծրագրին տրամադրեց \$25,000 ամերիկեան տոլար ։

Շուտափոյթ ապաքինում կը մաղթենք մեր հերոս զինուորներուն, որպէսզի իրենց լիակատար առողջութիւնը վերագտնելով վերադառնան իրենց բնականոն կեանքին։

ՀՕՄ–ի Գանատայի Ծրջանային Վարչութիւն

Voyages

HAIG

Travel

2եր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝

(514) 284-7676

ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...

ԼԱԻՄԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻԻՆ ԵՒ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ

***Նոր Յացէ՛**

PERMIS DE QUÉBEC

Voyages Haig Travel

4150 Rue Sherbrooke Ouest suite 404A, Westmount, QC H3Z 1C2

Tel: + 1 514-284-7676

Email info@haigtravel.ca

ՀՈՐԻԶՈՆ, 20-27 ՅՈՒՆԻՍ 2022 3

Սուրիոյ Հիւսիսի Հայաբնակ Երջանները

Հայոց Մեծ եղեռնէն ճողոպրած ու սուրիական անապատի թրքական սպան–դանոցներէն ազատած հայու բեկորները տեղաւորուեցան կառափնատի ճանա–պարհին վրայ գտնուող չրջաններուն, աւաններուն մէջ։ Անոնք սփռուած էին, Սուրիոյ հիւսիսի՝ Թուրքիոյ սահմանին վրայ գտնուող գօտիին մէջ։

Արեւմտեան Հայաստանի արեւել–եան շրջաններէն տարհանուածները կը տեղակայուէին ու ապաստան կը գտնէ–ին Սուրիոյ Ռաքքա եւ Հասիչէ նահանգ–ներուն հիւսիսը։

Յիշենք անոնցմէ Գամիշլին ու Տէ–րիքը, Տրրպէսիէն եւ մերձակայ գիւղերը ու աւելի հեռուն դէպի արեւմուտքի շրջանները՝ Ռաս Ուլ Այն, Արաբունար (Այն Արապ), Թել Ապիատ, Ճարապլոս եւ այլն։

Շատեր գացին հաստատուելու Հա–լէպ, որ տարագրեալ հայութեան կարա–ւաններուն հանգոյցն ու խաչմերուկն էր ու դարձած էր հայոց որբանոց–պատս–պարանն ու այրիանոցը։

Տէր Զօրի թրքական սպանդանոցի ճամբուն վրայ գտնուող Հալէպ հասած էր Կարինի, Խարբերդի ու նոյնիսկ Կիլիկ–իոյ հայկական բնակավայրերէն տեղա–հանուած հայերու հոծ բազմութիւն։

Աւելի ուշ, Ֆրանսա–քեմալական Թուրքիա սիրաբանութեան որպէս հետե–ւանք, երբ Կիլիկիան նուիրուեցաւ Թուրքիոյ, հայկական Կիլիկիան դա–տարկուեցաւ հայութենէ. հայութեան ստուար մասը հաստատուեցաւ Հալէպ ու անոր հիւսիսը կամ հիւսիս–արեւելքը գտնուող Ազազ, Աֆրին, մասամբ Պապ եւ Մունպուճ, եւ շօշափելի թիւ մը՝ Հա–լէպ, թէեւ ոմանք հասան մինչեւ Լիբա–նան ու ապա աւելի հեռու՝ Արեւմուտքի երկիրներ։

Սուրիոյ հիւսիս–արեւելքի հայկա–կան գիւղերէն Քեսապի, Եագուպիէի, Ղընեմիէի... թէեւ նօսրացած թուաքա–նակով, բնակիչներու բեկորները, ֆրան–սական իշխանութիւններու Սուրիոյ վրայ տիրապետութիւն բանեցնելէ ետք վերահաստատուեցան իրենց շրջաննե–րուն մէջ։

Վերոյիշեալ բոլոր շրջաններուն մէջ հաստատուած ու վերահաստատուած հայութիւնը շուտով դուրս եկաւ իր գաղթականի վիճակէն։ Կազմակերպեց իր կենցաղային, տնտեսական, կրթական կեանքը։

Սուրիոյ ժողովուրդին եւ ֆրանսա–կան հոգատարութեան ներքեւ գործող իշխանութիւններուն բարեացակամ վե–րաբերումը ունեցաւ իր դրական ար–դիւնքը, որպէսզի հայութիւնը շուտով դուրս գար իր գաղթակայաններէն։

Սակայն թրքական շարունակուող խժժուութիւններուն որպէս հետեւանք, այս անգամ Թուրքիոյ քրտական հաւա–քականներուն հանդէպ, քրտական վաչ–կատուն ցեղախումբը յաջորդող տաս–նամեակներուն եկան հաստատուելու հայ–արաբ խառն բնակչութեամբ բնակ–ուած շրջաններուն մէջ, ուր թրքական եաթաղանը անհասանելի էր, ու ապահո–վութիւն կը տրէր։

Թրքական հակաքրտական բռնու–թիւնները երկու բան կը նպատակադրէին։

Նախ՝ Թուրքիա կ’ազատէր քրւարտ մեծամասնութեամբ բնակուած շրջաննե–րէն, անոնք կը դատարկուէին, եւ պե–տութիւնը կանխած կ’ըլլար գալիք գլխացաւ մը՝ զանոնք հեռացնելով, երկ–րորդ կարեւոր նպատակը այդ սահմա–նագիծի գօտիին մէջ տեղաւորուած հա–յութիւնը կը հակակշռէր այդ վաչկա–տուն ու թափառաշրջիկ խումբերով, անոնց՝ հայերուն տեղը նեղցնելով։

Քրտական հոսքը դէպի Սուրիա սկսաւ 1923–1927 քրտական ապստամ–բութիւններով Թուրքիոյ դէմ ու շարու–

նակուեցաւ մինչեւ Բ. Աշխարհամարտ, իսկ վերասաստկացաւ 1961–ին Թուրքիոյ մէջ տեղի ունեցած քաղաքական հակա–մարտութիւններու որպէս հետեւանք կատարուած պետական յեղաշրջումին պատճառով։

Սահմանագօտիի հայութեան վրայ իր ժխտական անդրադարձը ունեցաւ նաեւ Սուրիոյ տնտեսաքաղաքական անկայունութիւնը, որ շարունակուեցաւ մինչեւ 1970 թուականը՝ (նախագահ զօր. Հաֆեզ Ասատի իշխանութեան գալու թուականը)։ Սուրիա–Խորայէլ պատե–րազմներուն որպէս հետեւանք՝ երկարա–ժամկէտ զինուորական ծառայութիւնն ալ սուրիական բանակին մէջ ժխտակա–նօրէն անդրադարձաւ այնտեղ ամրացած հայութեան վրայ, որ մերթ ընդ մերթ տեղափոխուեցաւ Հալէպ, Լիբանան եւ աւելի հեռուներ։

2011–ին սկսած սուրիական 11–ամեայ պատերազմը, որուն մէջ Թուրք–իա անմիջական դերակատար էր որպէս ահաբեկչական խմբաւորումներու խնա–մատար ու զինող ուժ, եկաւ յանգելու Թուրքիոյ կողմէ այդ սահմանագօտիի բռնադրաւման (ցայսօր), ու վերջնակա–նապէս հայաթափեց այդ շրջանները նոյնիսկ մնացած բեկորներէն։

Սուրիոյ Խալիպ նահանգի պարա–գային անդրադառնալով, Թուրքիա իր բանակիւ ներխուժումով Ազազ ու Աֆրին քաղաք՝ հայերու գոյութեան վերջնակէ–տը ամրագրեց։

Այստեղ չենք ուզեր մանրամաս–նութիւններ տալ միջնադարուն հայահոծ Ռուճի հովիտի հայութեան մասին (որուն բանասէր–հայագէտ դոկտ. Յակօբ Չո–լաքեան ուսումնասիրական ծաւալուն հատոր մը նուիրած է)։ Այնտեղ՝ Շուղուր աւանին մէջ (մերօրեայ Ճըսըր–Շուղուրի արեւմուտքին գտնուող), Հայ առաքելա–կան եկեղեցին առաջնորդարան ունեցած էր, սակայն կ’ընդգծենք, որ հոն մնացած էր հայկական, սակայն արաբախօս Եա–գուպիէ գիւղը, ինչպէս՝ լատինացած Գը–նէյթ ու Ճըտետիան, որոնց բնակչու–թիւնը յոյն–ուղղափառութիւնը կը դա–ւանէր։ Այդ գիւղերն ալ 2011–ի տագ–նապին պատճառով թօթափուեցան իրենց բնակչութենէն, ու թրքական իշ–խանութիւնները այնտեղ բնակեցուցին արաբ ու թուրքմէն ընտանիքներ։

Այստեղ նշեմ, որ 2012–2013–ին բռնադրաւուած Եագուպիէէն տեղա–հանուած եագուպիացի ընտանիքներ (աւելի քան տասնեակ մը) եկան հաս–տատուելու Քեսապ ու 2014–ին քեսապ–ցիներուն հետ տեղահանուեցան, երբ թրքական ահաբեկչական խումբերը ներխուժեցին Քեսապ։ Անոնցմէ 5–6 ըն–տանիքներ ցայսօր կը շարունակեն բնա–կիլ ազատագրուած Քեսապի մէջ, մինչ եագուպիահայերուն մեծ մասը տեղա–ւորուած է Լաթաքիա, Հալէպ եւ այլուր։

Եագուպիահայերու հայեացքը թէ–եւ սեւեռած է իրենց ծննդավայրին վրայ, սակայն անոնք վստահ չեն, թէ պիտի կարենա՞ն վերադառնալ իրենց գիւղը։

Այսօրուան դրութեամբ, Սուրիոյ հիւսիսի Թուրքիոյ հետ սահմանագօտին, բացի Քեսապի վարչական շրջանի սահմա–նագիծի 20–25 քմ–էն, մինչեւ Ռաքքա նահանգի սահմանագօտիի մեծ մասը, 20–30 քմ. լայնքով տիրապետուած է Թուրք–իոյ եւ կամ իր վարձկան խմբաւորումնե–րուն կողմէ, եւ հայաթափուած, իսկ քրտաբնակ շրջանները, իմա՝ քիւրտերը, ենթակայ են ամէնօրեայ ու հետեւողակա–նօրէն կիրարկուած թրքական բռնութիւն–ներուն ու խժժութիւններուն։

Ընդգծելի է նաեւ, որ Հասիչէ նա–հանգին մէջ տեղակայուած են ամերիկ–եան բանակի յենակէտեր (հասնելով մին–չեւ Իրաքի սահմանը), եւ անոնց՝ ամերի–կացիներուն նեցուկը վայելող քրտական



Քեսապի համայնապատկեր

խմբաւորումներ շրջանը դուրս բերած են սուրիական պետութեան ենթակայութե–նէն (բացի Գամիշլի քաղաքի կարգ մը թաղերէ, Գամիշլիի եւ Տէրիք գիւղի մէջ տակաւին կը գոյատեւէ նօսրացած թիւով հայութիւն)։

Որպէս եզրակացութիւն՝ հաստա–տենք, որ Թուրքիա յաջողած է ուղղակի թէ՛ անուղղակի միջամտութիւններով հայաթափել այդ շրջանները ու հիմա հե–տամուտ է քրտաթափելու զանոնք՝ ի գին ամէն տեսակ բռնութիւններու։

Մօտաւորապէս 900 քմ. երկարու–թիւն ունեցող այդ սահմանագիծին վրայ հայաբնակ մնացած են Քեսապն ու Գա–միշլին եւ դուցէ վերջինիս մերձակայ Տէ–րիքը։

Իսկ ի՞նչ ապագայ վերապահուած է այդ երկու շրջաններուն. տակաւին շարունակուող սուրիական տագնապին գծով մարդ ոչինչ կրնայ կուահել։ Այդ ապագան կախեալ կը թուի մեծապետա–կան խաղերէն ու համաձայնութիւննե–րէն, ուր պակաս դերակատար չեն շրջա–նային ուժերը, իմա՝ իր նախկին կայս–րութիւնը վերականգնելու փորձեր կա–տարող Թուրքիան։

Իսկ մնացած բնակավայրերու հայ–կական հաւաքականութիւնը որքա՞ն կրնայ դիմանալ այդ պայքարի բազմե–րես խաղերուն։

Յիշողութենէ չվրիպելու համար ընդգծենք, որ նախորդ տասնամեակին Թուրքիա Սուրիոյ հետ մօտ 900 քմ. եր–կարութիւն ունեցող սահմանին վրայ կառուցած է աւելի քան 3 մեթր բարձ–րութեամբ փշալարերով պատ մը, որ գրութեան մը մէջ անուանած էի ամօթի կամ վախի պատ։

Աւելցնեմ նոր նկատուած երեւոյթ–իրողութիւն մը, որ Թուրքիա Քեսապի հիւսիսարեւմտեան կողմը գտնուող նախկին Պաշուրտ գիւղին դիմացը (Գա–րատուրան գիւղին հանգիպակաց), սահ–մանամերձ վայրին վրայ տեղադրելով նախապէս կառուցուած շարժական տնակներ՝ բերած ու հաստատած է թուրք վաչկատուն հօտառած բնակիչներ՝ անոնց համար շինելով նոյնիսկ մզկիթ մը, որուն նամագի կանչը կը լսուի Գա–րատուրան գիւղէն։

Այցելեցէք hitunes.ca կայքէջը եւ օրական 24 ժամ ունկնդրեցէ Սառա Եղիայեանի կողմէ ընտրուած հայկական երգերը HITUNES.CA	Ունկնդրեցէ triktrak.ca կայքէջի հայկական համացանցային ռադիոժամի երգերը օրական 24 ժամ, իսկ ամէն հինգշաբթի երեկ. ժամը 8:00 - 9:00 լսեցէ շաիեկան հարցազրոյցներ TRIKTRAK.CA
---	--

Ի՞նչ նպատակ կը հետապնդէ Թուրքիա։ Խաղաղութի՞ւն։ Գուցէ՝ թրքական իւրայայտուկ, արիւնախառն խաղաղութիւն։

Թուրքերուն ու Թուրքիոյ հետ դա–րերու շփման լոյսին տակ հայութիւնը ինչպիսի՞ յարաբերութեան անցեալ ու–նեցած է։ Թուրքիա ինչպիսի՞ վերաբե–րում ունեցած է հայութեան հետ՝ նախ–քան Մեծ եղեռն ու յետ–եղեռնեան տա–րիներուն։

Պատմութիւնը դառնօրէն կը փաս–տէ, որ անցեալէն ցայսօր, Թուրքիա իր բազմազոյն վերնախաւերով (օսմանեան, երիտ–թրքական, քեմալական, մերօր–ուան՝ էրտողանեան...) ոչ մէկ պահու, ոչ մէկ ակնթարթ հաշտ աչքերով դիտած է հայութիւնը։

Անոնց խաղաղութիւն կոչուածը միշտ եղած է արնաթաթիս։

Եւ երեւակայել, որ Հայաստանի մերօրեայ իշխանութիւնները, ի գին Ար–ցախի, Սիւնիքի, սփիւռքի, խաղաղու–թիւն պիտի սարքեն թուրքին հետ, ու հայութիւնը խաղաղութեան այս «հեքի–աթը» կուլ պիտի տայ... ցնորք է։

Ես ատոր միամտութիւն չէի ըսեր, այլ՝ անմտութիւն կամ դաւամտութիւն։

Տողերուս աւարտին, յետադարձ ակնարկով մը մեր պատմութեան վրայ, երբ կը փորձեմ երեւակայել, թէ ի՞նչ ճա–կատագիր կը սպառնայ Հայաստանին, Արցախին, հայութեան՝ իր հատուածնե–րով, մարմնէս ու հոգիէս սարսուռ մը կ’անցնի։

Օր մը ըսին՝ «ապագայ կայ, կայ ապագայ»... Ի՞նչ ապագայ... թրքա–կա՞ն...

Այդպիսի անուրջն իսկ սարսա–փազդու է, նուազագոյն ու տարրագոյն ազգային նկարագիրն ու ապրումը ու–նեցող հայուն համար։

Մեծանուն գրագէտ Աւետիս Ահա–րոնեան իր «Ազատութեան Ճանապարհին» գիրքի «Խայը» պատմուածքին մէջ «Խայուն» շուրթերուն վրայ տեղաւորեց մէկ նախադասութիւն. «Ես չեմ հաւա–տար ճակատագրին»։

ԿԱՐՕ Վ. ՄԱՆՃԻԿԵԱՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ.- ՄԱՅԻՍ 28-Ե ՀՐԱԽԷՐ ՅԱՆՁՆԱՌՈՒԹԵԱՆ՝ Ի ԽՆԴԻՐ ՀԶՕՐ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Դարձեալ Մայիս 28 է։ Ազատութեան ու անկախութեան ձգտող ու պայքարող հայ ժողովուրդին համար իւրաքանչիւր օր Մայիս 28 է ու պէ՛տք է ըլլայ։

Այս տեսլականով ու յանձնառութեամբ սերունդներ կազմաւորուեցան։ Եռագոյնով ամբողջական Հայաստանը ամբողջական հայութեամբ վերակերտելու հաւատքը ու կամքը տասնամակներ շարունակ իմաստաւորեցին օրերը մեր ժողովուրդի զաւակներուն։

Արդարեւ, աշխարհաքաղաքական պայմաններու պարտադրանքով մեր կորսնցուցած անկախութիւնը 1991-ին վերականգնեցինք՝ անկախ ազգերու շարքին եռագոյնը բարձրացնելով եւ միջազգային համայնքին դիմաց հայրենիքին անկախութիւնը ամրացնելու մեր վճռակամութիւնը հաստատելով։

Անցնող 30 տարիներուն, իւրաքանչիւր հայ ազգին հաւաքական տունը ամրացնելու ու ծաղկեցնելու համագլխիւն ճիգին տարբեր կերպերով բերաւ իր մասնակցութիւնը։ Սակայն, դժբախտաբար, ահաւոր փտածութիւնը, անհեռատես քաղաքականութիւնը ու ջլատիչ անմիաբանութիւնը, դարձան քանդիչ ներկայութիւն Հայաստանի մէջ։ Մինչ մենք մեր յաղթանակով շլացանք, առանց զայն դիւանագիտական յաղթանակի ու տնտեսական զարգացման վերածելու եւ մեր բանակը կազմակերպելու, թշնամին լուր կերպով պատրաստուեցաւ՝ հերոսներու արիւնով ձեռք ձգուած մեր յաղթանակը պարտութեան վերածելու վճռակամութեամբ։ Եւ պատահեցաւ աղէտը։ Կորսնցուցինք հայու արիւնով ազատագրուած հողամասեր։ Կորսնցուցինք չուրջ հինգ հազար հերոսներ։ Կորսնցուցինք հայու ստեղծագործ ոգիին ու հաւատքին արտայայտութիւնը եղող վանքեր, եկեղեցիներ եւ մշակութային անհամար կոթողներ։

Այսօր յուսահատութեան ու անորոշութեան ամպեր կուտակուած են Հայաստանի ու Արցախի երկիրքին վերեւ։ Վերանկախացած Հայաստանի հզօրամասն մասնակից դարձած Սփիւռքի հայութեան երկնակամարը սկսած է ծածկ-

ուիլ անտարբերութեան ու յոռետեսութեան ամպերով։

Արդարեւ, խոր ցաւով ու մտահոգութեամբ կը հետեւինք Հայաստանի մէջ տեղի ունեցող զարգացումներուն։ Փաստօրէն, հայ կեանքէն ներս փոխադարձ ատելութիւնն ու անհանդուրժողութիւնը դարձած են տիրական։ Արցախի պատերազմէն ետք փոխանակ մեր ոյժերը համախմբելու, մեր միասնականութիւնը ամրապնդելու ու մեր ներուժը կազմակերպելու, ներքին բեւեռացումը դարձած է աւելի խոր՝ ազգակործան եւ հայրենաքանդ վտանգներով լեցուն։ Ներկայ կացութեան դիմաց, մեր թշնամին դարձած է աւելի պահանջկոտ ու յարձակողապաշտ եւ մեր մօտաւոր ու հեռաւոր գործընկերները ու բարեկամները սկսած են անտարբեր ըլլալ Հայաստանի նկատմամբ։

Ապրիլ 24-ի Հայրապետական Մեր պատգամին մէջ Մեր խոր մտահոգութիւնը արտայայտեցինք, միաժամանակ Մեր յստակ պատկերացումը պարզեցինք Հայաստանի ներկային ու մանաւանդ ապագային նկատմամբ։ Ըսինք ու կը կրկնենք. –

Մենք խաղաղութեան գործընթացին համաձայն ենք, սակայն ո՛չ ի հեճուկս Հայաստանի ամբողջականութեան ու անվտանգութեան եւ Արցախի հայութեան ինքնորոշման։

Մենք տարածաշրջանէն ներս Թուրքիոյ հետ դիւանագիտական յարաբերութիւններու բնականոնացման սկզբունքով համաձայն ենք. սակայն ո՛չ ի հեճուկս Հայոց Յեղասպանութեան ճանաչման եւ մեր ժողովուրդի իրաւունքներու հատուցման։

Պարտողական ու զիջողական դիրքերէ պէտք չէ բանակցինք եւ պէտք է խուսափինք համաձայնագրեր ստորագրելէ։ Հայաստանի իշխանութիւնը այսօր, վաղը եւ մի՛շտ, պէտք է գիտակցի, որ համահայկական բնոյթ ու տարողութիւն ունեցող խնդիրներու գծով իրաւունք չունի առանձին որոշումներ առնելու։ Հայաստանի բարեկամները ու թշնամիները եւս պէտք է գիտնան, թէ հսկայ Սփիւռք մը կայ Հայաստանի ու



Արցախի ժողովուրդի կողքին եւ անոնց պահանջներուն ետին։

Իր հողային ամբողջականութիւնը ու անվտանգութիւնը, ինչպէս նաեւ Արցախի ինքնիշխանութիւնը կորսնցնելու վտանգին ենթակայ, անորոշ ապագայի դիմաց գտնուող Հայաստանը կարիքը ունի խոհեմութիւն ու հեռատեսութիւն, քաջութիւն ու տեսլական ունեցող քաղաքական ղեկավարներու, որոնք կարենան. –

— Հայրենիքի գերագոյն շահերուն շուրջ համախմբել մեր ժողովուրդի բոլոր զաւակները եւ անսասան պահել Հայաստանի գերիշխանութիւնը։

— Վերջ տալ այլամերժութիւնը խորացնող ու բռնութեան առաջնորդող բեւեռացումներուն։

— Արցախի հայութեան ինքնորոշման արդար իրաւունքը սակարկութեան նիւթ չդարձնել։

— Հայոց բանակին հզօրացումը ու արդիականացումը նկատել առաջնահերթ։

Ըլլանք արթուն։ Թուրքիան եւ Ազրպէյճանը բարի դրացնութեան քօ-

ղին ներքեւ կ'ուզեն կտրատել Հայաստանը ու ջլատել մեր ազգին ոյժը։

Ըլլանք իրատես։ Ներկայ վտանգալից կացութեան շարունակումը պիտի հիւծէ մեր ներուժը, քայքայէ տնտեսութիւնը եւ արտագաղթի դռները լայնօրէն պիտի բանայ։ Մեր ժողովուրդի ժամանակակից պատմութեան այս ճակատագրական հանգրուանին, ահաւոր տագնապներով չըջապատուած ու հոգեվարքի մէջ գտնուող Արցախն ու Հայաստանը, Սփիւռքին հետ միասին, հրամայական ու անյետաձգելի կարիքը ունին հայրենիքը դէպի փրկութիւն առաջնորդող ամուր միասնականութեան։

Սարդարապատի միասնականութիւնը փրկեց Հայաստանը։ Այսօր եւս Սարդարապատեան շուռչով ու ոգիով թրծուած նո՛յն միասնականութիւնը պիտի փրկէ մեզ։

Մայիս 28-ն հրաւէր է զգաստութեան ու ինքնաքննութեան եւ կոչ՝ պատասխանատուութեան ու նպատակաւայ յանձնառութեան, ի խնդիր միակամ հայութեան, ինքնավար Արցախի եւ հզօր Հայաստանի։

RITA BAGHDASSARIAN Conseillère en Sécurité Financière Revenu Garantie Viager COMPTE D'ÉPARGNE LIBRE D'IMPÔT (CELI) • CRÉATION D'HÉRITAGE • REER, FERR, RENTE RETRAITE • PLAN D'ÉDUCATION-REÉ • ASSURANCE-VIE & HYPOTHÉCAIRE • ASSURANCE SALAIRE & COLLECTIVE • ASSURANCE DE PARTENARIAT 3820, boul. Lévesque Ouest, Bureau 101, Laval Qc. H7V 1E8 Tél.: (450) 973-2822 • (514) 884-1117 • Fax: (450) 973-2262 ritabagh@yahoo.com	VIZUALIS optométriste DR SHANT DONABEDIAN Centre d'Achat Fairview • Fairview Mall Pointe Claire 514 695 2555 • VIZUALIS.CA	 Danièle Papazian, MSc. Courtier immobilier C 514.234.6799 dpapazian@remax-quebec.com www.remaxducartier.com RE/MAX DU CARTIER Agence immobilière 1290, rue Bernard Ouest, bureau 100 Outremont Qc H2V 1V9 T 514.271.2131
 Assura Bien inc. Cabinet en assurance de dommages et de services financiers Ապահովագրական գրասենյակ KRIKOR ABRAKIAN VAHAN MATOSSIAN 970 Montée de Liesse, suite 306, Saint-Laurent, Qc, H4T 1W7 T: 514.903.3999	 Pâtisserie MAHROUSÉ FONDÉE EN 1970 9705 Boulevard de l'Acadie, Montréal, QC H4N 2W2 Tél: 514.279.1629 • info@mahrouse.ca • www.mahrouse.ca	 Stéphane BOYER Maître de Laval  Seta TOPOUZIAN Conseillère municipale de Renaud 514 862-1402 s.topouzian@laval.ca
 RE/MAX RE/MAX 3000 inc. Agence immobilière  Elie Berberian Courtier immobilier Real Estate Broker C 514.519.3543 B 514.333.3000	FIVE STAR ELECTRIQUE CINQ ÉTOILES SPECIALIST IN DECORATIVE GARDEN LIGHTING RESIDENTIAL-COMMERCIAL BEDROS NALPATIAN 442, LA RIVIÈRE, LAVAL QC. TEL: 514-497-5155 FAX: 450-689-3997 E-MAIL: ELECTRIC.FIVESTAR@GMAIL.COM	 Pharmacie Levon Benohanian et Mher Koubelian Inc. Pharmaciens-propriétaires 3915, Boulevard Samson Laval, QC H7W 2G1 T 450 688-4111 F 450 681-5525 Lun. au vend. : 8h30 à 21h Sam. et dim. : 9h à 17h Infirmière (jeudi) : 8h30 à 15h LIVRAISON GRATUITE membre affilié à Proxim

«Դիմադրութեան» Ծարժման Կարմիր Գիծերը

Հայաստանի մէջ «Դիմադրութեան» շարժման մասնակիցներ հարց կու տան, թէ ինչո՞ւ լիբանանահայ-յութիւնը, հակառակ անցեալին բազմիցս հաստատուած իրողութեան, չ’արձագանգեր աւելի քան քառասուն օրերէ ի վեր ծաւալող ցոյցերուն, հաւաքներուն եւ քայ-լարշաւներուն։ Կը բացատրեմ, որ տնտեսական ու ընկե-րային դժուար պայմաններու տակ, քաղաքական սուր ճգնաժամի առկայութեամբ կայացած երեսփոխանական ընտրութիւնները, առժամաբար կյանած են բոլորին ու-շադրութիւնը։ Այլապէս դժուարին կացութեան մէջ, երեսփոխանական ընտրութիւնները կայացան համա-ձայն ընտրական բարդ, հակասական ու անարդար օրէնքի մը, որ կը սպառնար հայ համայնքի իրաւունք-ները խախտել ու խորհրդարան բերել հայանուն, բայց հայութեան հետ ոչ մէկ առնչութիւն ունեցող անհատ-ներ։ Թէժ պայքարով կայացած ընտրապայքարէ մը ետք, ՀՅ Դաշնակցութեան թեկնածուները կրցան տիրա-նայ հայութեան յատկացուած վեց աթոռներէն երեքին։ Դժբախտաբար, հայկական միւս կուսակցութիւնները յաջողութիւն չարձանագրեցին, եւ մնացած երեք աթոռներուն տիրացան հայանուն անձանօթներ։

Ընտրութիւնները աւարտած են, ու թէեւ քաղա-քական ճգնաժամը չէ յաղթահարուած ու տնտեսական սուր տագնապը կը շարունակուի, լիբանանահայու-թիւնը բնականաբար պիտի վերադառնայ իր աւանդա-կան ապրելակերպին, այսինքն՝ հայրենակեդրոն աշխուժ գործունէութեան։

Հայրենական իրականութիւնը տիրապետուած է 44–օրեայ պատերազմին, պարտութեան եւ Ազրպէյճա-նի հետ բանակցութիւններու, գործող իշխանութիւննե-

րու պարտուողական քաղաքականութեան նիւթերով։ Հակաքարոզչական շփոթեցնող արշաւներու առանցքը առնելու համար, կը մէջբերեմ «Դիմադրութեան» շարժման օրակարգային նախադրեալները, որոնք կը ներկայացուին իբրեւ Հայաստանի ժողովուրդին, ո’ղջ հայ ազգին կողմէ «կարմիր գիծեր»։ Ստորեւ՝ այդ բա-նակցային «կարմիր գիծերը»։

1) Հայաստան պէտք է աջակցի Արցախի ժողո-վուրդի ինքնորոշման իրաւունքի լիարժէք գործադր-ման։

2) Արցախը երբեք պիտի չըլլայ Ազրպէյճանի կազմին մէջ։

3) Հայաստանի Հանրապետութեան եւ Արցախի Հանրապետութեան միջեւ պէտք է ըլլայ յուսալի ցա-մաքային կապ. Արցախ անքլաւ պիտի չըլլայ։

4) Հայաստանի Հանրապետութիւնը Արցախի ժո-ղովուրդի անվտանգութեան եւ ինքնորոշման իրա-ւունքի իրականացման երաշխաւորն է։

5) Սահմանագծման եւ սահմանազատման աշխա-տանքները պէտք է իրականացուին Հայաստանի Հան-րապետութեան ինքնիշխան տարածքէն Ազրպէյճանի գօրքերու դուրս բերման նախապայմանով։

6) Սահմանագծման եւ սահմանազատման աշխա-տանքներուն հիմամբ կը բացառուի Հայաստանի Հան-րապտութեան ամբողջականութեան խաթարումը։

7) Հայ–թրքական յարաբերութիւններու կարգա-ւորման գործընթացին մէջ կը բացառուի որեւէ համա-ձայնութիւն, որ հարցականի տակ կը դնէ Հայոց ցե-ղասպանութիւնը։

8) Ազրպէյճանի եւ Թուրքիոյ հետ ճանապարհնե-

Վերականգնումը կը դառնա՞յ ազգային, քաղաքական, մշակութային եւ ինքնութեան իրա՛ւ առաջադրանք

Այսօր կանգնած ենք ազգային, մշակութային, քաղաքական բազմաբնոյթ նահանջներու, կորուստնե-րու եւ աւերներու դիմաց։ Մեր ժողովուրդի եւ «ղեկա-վարութիւններ»ու ո՞ր տոկոսը պատմական պատասխա-նատուութիւն կը զգայ, եւ անմիջականն ու մակերեսա-յինը գերանցելով, նախ կացութեան անսեթեւեթ գնա-հատումը կ’ընէ, մանրուքներու մէջ չկորսուող վերա-կանգնումի ծրագիր կը մշակէ եւ կը նուիրուի անոր իրականացման։

Փաստ է, որ ազգը, ներսը եւ դուրսը, կանգնած է գոյութենական վտանգներու դիմաց, որքան որ ալ ու-ղենք խանդավառուիլ տղական բնոյթի յաջողութիւն-ներով, որոնք մասնակի երեւոյթներ են, սփիւռքի պա-րագային՝ տեղական եւ տեղայնական, որոնք կը վարա-գուրեն ազգի իրաւ կացութիւնը եւ կը գինովնանք կրկներեւոյթներով։ Սովորութիւն չունինք, հաւանօրէն միջոցներն ալ չունինք, չենք ուզեր ալ ունենալ, վիճա-կազրութիւններ կազմելու եւ անոնց վրայ հիմնուելով տրամաբանելու, թիւելով մտածելու, դատումներ ընելու, եւ ապա միայն խօսելու ազգային, քաղաքական, մշա-կութային եւ ինքնութեան հարցերու մասին, անորակ վէճերը եւ մրցակցութիւններ փոխարինելով առարկա-յականութեամբ։

Ինչ որ կարելի է արձանագրել ազգայինի գլիտւն տակ, ոչ մէկ յստակութիւն ունի։ Թուեմ.

ա. Ի՞նչ է հայ ժողովուրդի համրանքը։ Հայաս-տան մարդահամար կը կատարուի։ Այդ համրանքը մօ-տաւորապէս 3 միլիոն է, յարափոփոխ թիւ մը, քանի որ մեծ թիւ կը կազմեն նախկին խորհրդային հանրապե-տութիւններուն մէջ աշխատանքի պատճառով հոն գտնուողները, որոնք բոլորովին չեն անջատուած երկ-րէն եւ կան վերջնական կերպով հոն հաստատուածներ։ Խորհրդային Մեծ Հայրենիքը կը շարունակէ մնալ իր Հայրենիքի դերին մէջ։

բ. Ռուսիա եւ նախկին հանրապետութիւննե-րուն մէջ ապրող հայերու թիւը, զոր սովորութիւն դար-ձած է կոչել «ներքին սփիւռք», գնահատումներով, 2 միլիոն է, թերեւս աւելի, առանց հաշուելու նախա-խորհրդային չրջանի հայերը, որոնք, ստուար մեծամաս-նութեամբ, օտարացած են։ Ոչինչ եղած է գանոնք վե-րադարձնելու հայկական համրանքին մէջ։

գ. Կայ Վրաստանի սահմաններուն մէջ ապրող հայութեան պարագան, որ հոն էր Հայրենիքի մէջ ըլլա-լու պէս, իր կրօնական, կրթական եւ քաղաքական կա-ռոյցներով, մանաւանդ որ պատմական հայկական չրջաններ այսօր ներառնուած են Վրաստանի կազմի մէջ։ Վրաստանի հայ ազգաբնակչութեան թիւը, ըստ գնահատումներու, պէտք է ըլլայ շուրջ 500.000։

դ. Իրանի հայութեան թիւը, վերջին տասնամ-եակներուն զգալապէս նուազած է, 70–80 հազարէն աւելի էր դեռ քսան տարի առաջ, հիմա շուրջ 50.000, առաւելաբար կեդրոնացած մայրաքաղաք Թեհրանի

մէջ։

ե. Միջին Արեւելքի խիտ հայութիւնը տարտղն-ուած է եւ համրանքը նուազած։ Սուրիոյ, Լիբանանի, Յորդանանի, Երուսաղէմի, Իրաքի հայերու թիւը զգա-լապէս նուազած է։ Քիչեր հայրենադարձած են։ Մեծա-մասնութիւնը գացած է Եւրոպա, մանաւանդ Միացեալ Նահանգներ եւ Գանատա, երբեմն նաեւ Հարաւային Ամերիկա, ուր կային հին հայկական գաղութներ, ինչ-պէս Արժանթին եւ Պրագիլ։ Մեծ թիւ կը կազմեն աշխա-տանքի համար Ծոցի երկիրներ գացած հայերը, անոնք ստեղծած են թեմական կեանք, Քուէյթի մէջ ունին ամենօրեայ դպրոց եւ այլ վայրերու մէջ կան միօրեայ դասեր։ Շատեր չեն վերադառնար Սուրիա կամ Լիբա-նան, ընդհանրապէս կ’երթան Քալիֆօրնիա, Գանատա, Աւստրալիա։ Անցեալ դարու կէսերուն Սուրիոյ հայու-թիւնը աւելի քան 100.000 էր, Լիբանան՝ աւելի քան 200.000։ Յրանսան ունի մեծաթիւ, հարիւր հազարա-ւորներով հին գաղութ, որուն վրայ աւելցած են Միջին Արեւելքէն, Թուրքիայէն եւ Հայաստանէն արտագաղ-թողները։

Պոլսահայութիւնը տարիներու ընթացքին հա-լած է, աճեցնելով Միացեալ Նահանգներու եւ Յրանսա-յի հայերու համրանքը։

Այսօր յառաջած են նոր գաղութներ, ինչպէս Շուէտ, Սպանիա, Հոլանտա–Նետերլէնտ։ Աւստրալիոյ գաղութը կ’աճի եւ կը տարածուի,– Միտնի, Մելպուռն, Քանպերրա, Փըրթ, հիմա կը հասնի Նոր Զելանտա։ Նոր գաղութներ կան քիչ մը ամէն տեղ, մինչեւ Ջինաստան։ Դասական սփիւռքի տեղաշարժերուն վրայ գումարուած են զանգուածային կերպով Հայաստանէն արտագաղ-թողները, որոնց թիւը մօտաւոր ճշգրտութեամբ արձա-նագրել դժուար է, մէկ միլիո՞ն, աւելի՞։

Ինչ որ կ’ըսեմ հեռու է կացութեան իրաւ պատ-կերը ըլլալէ։

Դեռ պէտք է խօսիլ Թուրքիոյ մէջ իսլամացած եւ թաքնուած հայերու մասին։ Ինչպէ՞ս ազգին վերա-դաճնել այդ զանգուածները։

Փաստը այն է, որ այսօր հայկական համրանքի մեծամասնութիւնը հայրենիքէն դուրս է։ Հակառակ կարգ մը գաղութներու մէջ եղող կազմակերպութիւն-ներու, ընդհանուր պատկերը այնպէս է, որ սփիւռք(ներ)ը չի ղեկավարուիր, բայց կը բազմապատկ-ուին «ղեկավարութիւններ»ը։ Հարց է. ինչպէ՞ս ղեկա-վարել եւ ղեկավարուիլ օր առօր աճող ղեկավարու-թիւններով։ Սփիւռք(ներ)ը անորոշ համրանք է։ Մէկ գաղութէ միւսը նմանութիւններ եւ ազգային ըմբռ-նումներու, մասնակցութեան, մշակութային, լեզուական եւ ինքնութեան տարբերութիւններ կան։ «Ազգային»ը եւ «հայկական»ը վերագիւրներ են, խորքային նոյն իմաստը չունին մէկ երկրէ միւսը։

Հայաստանի լաւատեսութեամբ 3 միլիոնէն տարբեր, քանի՞ միլիոն է հայութեան թիւը։ Սովորաբար

րու ապաշրջափակումը չի կրնար տեղի ունենալ մի-ջանցքային տրամաբանութեամբ։

Ինչպէս յստակօրէն կ’երեւի այս պահանջներէն, աթոռակռիւի նմանող որեւէ բան չկայ «Դիմադրու-թեան» շարժումի դիրքորոշման մէջ։ Իշխանափոխու-թեան պահանջը արդիւնք է այն քաղաքական դիրքո-րոշման, որ փաշինեանական իշխանութիւնները կը ցու-ցաբերեն պահուըտելով «խաղաղութիւն» անորոշ տա-րագին ետին։ Անոնք կ’ըսեն, որ բոլոր հարցերը քննուած են անցեալ յունիսին կայացած ընտրապայ-քարի ընթացքին, ու ժողովուրդը իր ընտրութեամբ հա-մաձայնութիւն յայտնած է իրենց դիրքորոշման։ Ճշմարտութիւնը այն է, որ ընտրապայքարի ընթացքին ազգային նուազագոյն պահանջները ոչ իսկ արծարծ-ուած են ու ընտրող ժողովուրդը պարզապէս խաբուած է՝ կարծելով, որ պատերազմին պարտուած իշխանու-թիւնները տէր պիտի կանգնին ազգին ու հայրենիքին իրաւունքներուն՝ «կարմիր գիծերուն»։

Անգամ մը եւս կրկնե՛ք, որ հայրենի հասարա-կութեան բարոյական առողջացման, քաղաքական ազ-գային տեսլականի որդեգրման, Հայաստանի ու Արցա-խի ազատութեան եւ անկախութեան երաշխաւորման համար, ներկայ քաղաքական խմբաւորման փոփոխու-թեան այլընտրանք չկայ։ Ազգային ուժերը պէտք է փոխարինեն անընդունելի գիջումներու գնով կեղծ խա-ղաղութեան ձգտող անկարողներու ապազգային խմբաւորումը։

Պայքարը ազգային է. ան պիտի շարունակուի մինչեւ վերջնական յաղթանակ։

Տիգրան Ծինպաշեան

կը գահանանք ենթակայական գնահատումներով։ Ո՞վ այսօր, նոյնիսկ 20%ով սխալելու գինով, կրնայ ճշդել Հայաստանէն դուրս գտնուող հայերու թիւը, տա՞սը, քսա՞ն կամ աւելի միլիոններ։

Այս մարդկային դրամագլուխը ազգային եւ յանձնառութեան ի՞նչ որակ ունի, ո՞վ եւ որոնք պիտի տան այդ որակը, կարելի՞ է այդ որակը ստեղծել եւ պա-հել։ Հայկական համարուող բազմութիւնները միացա՞ծ են, կրնա՞ն միանալ եւ ծառայել ազգին իր ինքնու-թեամբ տոկալու եւ տեւելու գոյութենական խնդրին, որ հայրենիքի եւ ժողովուրդի միացումն է։

Հայաստանէն դուրս ապրող այս արտղնուած զանգուածները հաւաքական ուժ չեն։ Կան մասնակի ուժեր, որոնք հայկական միլիոններու եւ անոնց նիւթա-բարոյական ուժը չունին իրենց ետին։

Հաստատուած է համայնքներու դրութիւն, անոր հուճով՝ համայնքային մտայնութիւն եւ մաս-նակիի երեւելիական ընտրանիի ղեկավարում։ Ո՞վ այ-սօր կրնայ ըսել, թէ ի՞նչ կատարած է, կը կատարէ, կ’ու-զէ կատարել ջարդուած ազգային մէկութիւնը վերա-կանգնելու համար։ Հաշիւ տուող չկայ, քանի որ կոտո-րակուած ազգը դադրած է հաշիւ պահանջելէ, այսինքն՝ ինք իր ճակատգրին տիրութիւն ընելէ։

Պիտի գտնուի՞ն յարգելի, հեղինակաւոր, կող-մերը գերանցող մտաւորականներ, ոչ անպալան չէ-ն զոքներու խումբ մը, ոչ ինքնակոչիկներու իսկական ընտրանի մը, որ միացեալ կոչով հրապարակ պիտի գայ, զգաստութեան հրաւիրելով «ղեկավարութիւններ»ը, որ վերջ տան իրենց բազմացման եւ ազգի կոտորակման, եւ նախաձեռնեն հասարակաց համազգային առաջադ-րանքներու ամբողջի մը շուրջ խմբուելու, միշտ պէտք է կրկնել, ոչ թէ յաւելեալ իրաւունքներու եւ անոնց մանրուքներուն համար, այլ՝ յաւելեալ պարտքի։

Այս ընելու համար, ազգը, իր մեծերով եւ պզտիկ-ներով, պզտիկցած մեծերով, պէտք է ինքզինք ներդնէ այն բարոյական մեծութեան մէջ, որ պէտք է կարենայ ըսել՝ ԴՈՒՆ ԻՐԱՒՈՒՆՔ ՈՒՆԻՍ։ Երբ բազմաթիւ են իրաւունք ունեցողները, ճշմարտութեան մենաշնորհը իրենց իրենց վերապահողները, կը նշանակէ, որ ո՛չ բա-րոյական կայ ո՛չ ալ՝ ճշմարտութիւն։ Կը մնան խարխա-փումներ, նահանջ, խառնակութիւն, պարտութիւն։

ԻՐԱՒ ՄԵԾՈՒԹԻՒՆ պիտի նուաճեն անոնք որոնք պիտի յաջողին մեր տարտղնուած եւ տարտղ-նուող միլիոնները վերածել ՄէյՈՒԹԵԱՆ, վերջ տալով իւրաքանչիւրի թաղային մանրուք փառասիրութիւն-ներուն, այլապէս պիտի շարունակենք սպասել հրաշքը՝ որ երկիրքէն պիտի գայ։ Մինչ այդ, ի՞նչ պիտի ըլլան մեր միլիոնները։

Այս օրակարգը բաց է։ Հարկ է խօսիլ եւ գոր-ծել։

Յ. Պալեան

MPP Aris Babikian is re-elected in Scarborough—Agincourt



TORONTO—The 2022 Ontario general election was held on June 2, 2022, to elect Members of the Provincial Parliament to serve in the 43rd Parliament of Ontario.

Ontario PC leader Doug Ford secured a second majority government with an emphatic win that saw him increase from his 2018 seat count and force both of his main rivals to step down.

Ford’s PCs were elected or leading in 83 of 124 ridings.

Aris Babikian of the Progressive Conservative Party of Ontario was reelected in the Scarborough—Agincourt riding. Babikian has represented the electoral district since 2018.

Babikian was declared the winner with 48.52 per cent of 13,417 ballots counted as of 9:34 p.m. Soo Wong (Liberal) was in second with 37.12 per cent of votes and Benjamin Truong (NDP) was in third with 9.19 per cent.

Armenia cannot refuse Artsakh’s self determination, says Armenia’s Academy of Sciences

YEREVAN—The National Academy of Sciences of Armenia released an announcement, sharing its concerns about the crisis in Armenia and Artsakh. The statement reads:

“The National Academy of Sciences of Armenia is expressing its concerns about the latest incidents taking place around the Republic of Armenia and the Republic of Artsakh.

Being an apolitical structure, the statutory task of which is the development of science, the Academy, however, cannot remain indifferent to the existential political challenges for our state and nation. The danger of possible deprivation of homeland and genocide of Artsakh-Armenians is such a challenge today, which is a red line for the humanity.

Artsakh, which has been part of the Armenian civilization for millennia, is an inseparable part of our homeland, the Artsakh-Armenians are the part who have preserved the longest statehood of our nation, our eastern stronghold. However, since at least early 20th century, the Caucasian Tatars, with the support of Turkish circles, later their Azerbaijani descendents, were making all efforts to eliminate any Armenian trace in Artsakh. All these was accompanied by crimes against humanity.

This policy continued also after the collapse of the Soviet Union and gained a special momentum in the new conditions formed as a result of the 2020 44-Day War, in fact turning into an inseparable component of the official ideology of Azerbaijan. Today we are witnessing such open manifestations of this vicious policy as the plans

to totally eliminate the Armenian historical-cultural trace in the new territories under its control, spread Armenophobia in all possible international platforms, distort history, ignore the international law, particularly, violate the Geneva Convention on treatment with prisoners of war, etc.

In case of appearing under Azerbaijan’s control, Artsakh will face a quick eviction of Armenians, and the Armenians of Artsakh – deprivation of homeland, genocide. Artsakh cannot be part of a state in any status, which is educating already several of its generations in an atmosphere of greedy Armenophobia. The Republic of Armenia is the guarantor of the security of the people of Artsakh and the exercise of their right to self-determination. We cannot refuse from this fundamental principle.

Today the Republic of Armenia and the Republic of Artsakh are facing serious challenges. It is necessary to unite all our potential to resist those challenges and find solutions to the existing problems.

The National Academy of Sciences of Armenia is ready to provide professional consulting to the public authorities of Armenia, could become one of the platforms where issues of pan-Armenian significance, solutions could be discussed and alternative options could be proposed for forming a pan-Armenian agenda”.

ANCC welcomes Amb. Dion’s recommendation for a Canadian Embassy in Armenia

OTTAWA — The Armenian National Committee of Canada (ANCC) on June 3 welcomed Ambassador Stéphane Dion’s recommendation for the establishment of a Canadian Embassy in Armenia, as a part of his larger report — submitted to the Minister of Foreign Affairs — on how Canada can better support Armenian democracy.

On June 25, 2021, Ambassador Stéphane Dion was appointed as Canada’s Special Envoy to Support Armenian Democracy. Following extensive consultations in Canada and abroad, on March 2, 2022, he concluded his official trip to Armenia, showcasing the potential for stronger and more robust bilateral relations between Canada and Armenia.

“Ambassador Dion’s recommendations and his timely proposal for the establishment of a Canadian Embassy in Armenia is a true testament to the ever-growing bilateral ties between Canada and Armenia,” said Hrag Tarakdjian, Co-President of the ANCC.

